


ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՇԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵԼՍ



(Տես յէջ 211-2)

ԽԴ

Սևանայ վանքը. — Ելեկուքա. — Գելիժանի վայրէջք. — Երկրին երևոյրք. — Գելիժան. անոր բնակիչքը. ամարսանոցք. Աքսուաֆայի հովիտը. — Քարաւաններայ. Տփղիս.



Մենք հիստորիային արևմտեան ծայրը համեմտելով կը տեսնուի հռչակաւոր Սևանայ կղզին, հանդերձ իր վանքովը, որ ինք դարերէ ի վեր նշանաւոր հնահայկապետացած է: Այս կղզին, կամ մանաւանդ կղզեակը, ուրիշ բան չէ՝ բայց եթէ շրերու խորէն դուրս ելած պարփութի կոյտ մը: Շատ հետո չէ լծի ափունքէն, և գրեթէ մի հազարամեղր երկայնութիւն և հինգ հարիւրամեղր լայնութիւն ունի: Տասնումէկ դար յառաջ, կար այնտեղ Ս. Գրիգոր Լուսաւորչէ կառուցուած եկեղեցի մը և ամրոց մը: առաջնայ հետքը չկայ հիմայ, իսկ երկրորդը քանդուեցաւ վերջին սմիթեան. ամիրայետի ձեռքով: Այժմ վանքին մէջ շատ հին եկեղեցի մը կայ, որ հաւանականաբար հիմնուած է Մարիամ իշխանուհոյն ձեռքով, որ գուտար էր Մեծին Աշտոյ հայոց թագաւորին: Այս տեղ արքեպիսկոպոս մը և բազմաթիւ կրօնաւորք կը բնակին, որոնք ճշմարտի կեանք կը վարեն հանդերձ մշտնջենաւոր պահօք և յարեանական լուսութեամբ: Յիբրաի դժուարին է գրտնել տեղ մը՝ այնքան մեղմամեղմիկ, այնքան զտուած աշխարհային իրերէ, ինչպէս է Սեւանայ կղզին:

Լծին այս ափանց վրայ, բաւական ժամանակ է, յարկածածուկ փապուղի մը կար, որ փոթորիկ ելած ատեն կառքերու և ձիաւորաց

անցուարձի տեղ կը ծառայէր, որովհետեւ ճանապարհն այն աստիճան գառնիւյր է, որ շատ անգամ հովը կ'առնուր կը տանէր հոն գտնուող ամէն բաները: Սակայն այս փապուղին ևս ժամանակին և մրթիկներու աւերիչ հարուածէն աւերեր, և կարևոր նորագութիւններ ի զործ չըրուելով, բոլորովին անգործածելի դարձեր է:

Շատ անգամ ահաւոր փոթորիկներ այս պարփութային և մշտած կողերով լեռներէն վար կ'իջնեն, և անշուշտ Սևանայ ճշմարտները, իրենց ժայռին վրայէն ահաւոր տեսարաններու հանդիսատես կ'ըլլան:

Ժամ ինն ու կէսին կը նմարենք Ալեքսանդրովբայ մալական զիւղաբաղարը: Յետոյ կը հասնինք կէօք-շայի հիստորիային ծայրը և ապա յԵլեկուքա, ուր կը դապարինք: Վէտ վէտ ալիքներն մեղմ կերպով կու գան կը խորտակին գետափանց վրայ, և այս անգէս (2000 մեղր բարձր) կ'ընդդրէ համատարած տեսարան մը, բոլոր խորածորին վրայ:

Բազմաթիւ ձկներ կը գետան շրոց խառնուրդին մէջ, ուր դարանած կը սպասեն իրենց բազմաթիւ սեռու ջրագուռներ և սպիտակ ճայրեր:

Պանդոլին մէջ, մալական բարի պտտա մը մեղ համար ընտիր նախաճաշ մը պտտաբատեր էր, և զլիսաւոր կերակուրնիս է

լուսիի գրչնով (saumonéc) փառաւոր կարմ.
բարայտ մը :

Ելեհովբայէն յառաջ կը տանինք ճամ-
բանիս՝ լճին հիսթապչին ափանց երկայնու-
թեամբ, յետոյ արևելեան եղբորէն վար
կ' իջնենք մինչև Չուպուրքի գիւղը : Այս ան-
ղէն սկսեալ կէօբ-չայ հեօղհեաէ աչքէ կ'ան-
հետանայ, որովհետև ճամբան կը սկսի հա-
կառակ ուղղութեամբ շարունակուիլ :

Մեծնովբայէն և Է.էբ-ձկյաանի կիրճէն
(2470 բարձր) անցնելէ վերջը, կը սկսի
դէպ ի Դելիման՝ զարմանալի և զխու պը-
տոյս պատճառով զառիւյալը, անդրակովիլա-
սենհ հոչակաւոր ճամբուն պժուարակոխ անց-
քերու մէջէն, որ եղևնեամբ անտառներու մէջ
ծածկուած է : Մէկ ժամ գուարճութենէ մը
վերջը կը հասնինք ի Դելիման, ուր պիտի
թողունք փայտոն կառքը :

Հոս ևս տեսարանը կը փոխուի : Կը զրա-
նուիք հիանալի ամառանոցի մը մէջ որ շատ
յաճախեալ է և մեծ շարժման մէջ : Հոյոց-
ներով և պանդոկներով զարդարուած ճամբուն
վրայ դիզուած է խուան բազմութիւն մը, որոց
մէջ կը շրջափայլի վայելուչ և շքեղ կերպով
հագուած և զարդարուած տիկնայք, չէքքեզի
քմահանոց տարազներով պարոնայց թիւ մը-
սած : Յանպզօն ամազոնք կը ճախրեն իրենց
ձիերով գովէջներու լծուած սայլերու մէջսեղ :

Կտօքերը փոխելու միջոց քիչ մը ժամա-
նակ զանելով, կը մտնեմ՝ այն խառնաօրայն
բազմութեան մէջ, ուր կը տեսնուին՝ Կոլ-
կասու և Անդրակովիլասու սզգաց բոլոր յա-
տուկ ոտարազները : Ենթոյայ են հոն Ռուս-
ներ, Քերմանք, Հայք, Թաթարք, Քուրդք,
միշտ սակաւախօսք, Վիրք, Լեզգիներ, Լա-
զեր, Հրեայք, և շատ ուրիշ ազգեր : Այս
շարժմանս պատճառն է՝ Դելիմանի առողջա-
բար օդը և անոր դիրքը, որովհետև Երևա-
նէն դէպ ի Տփղիս և Աղջիւստաղրասուլ տա-
նոց ճանապարհին կեղտոնն է :

Քաղաքին բնակութիւնքը ցան և ցիբ սըփ-
ուած են Աքսոտաֆա-չային ափանց վրայ,
որուն վճիա չուրը փայտուն և քմահանոց
կերպով կը հասէ ժայռերու յատակի մը վը-
րայէն : Իսկ իրեն երեոյթը շատ գեղածի-
ծաղ է :

Հաղիւ երեկոյեան ժամը եօթին ճամբայ
կ'ելնենք դէպ ի Աքսոտաֆայի օթևանը, ուր
պիտի մտնենք դէպ ի Տփղիս մեկնող կա-
ռախմբին մէջ : Գիշերը վրոյ կը հասնի,
պայծառ և ատեղափայլ գիշեր մը : Ճամ-
բան, թէ և վայրենագոյն երկրի մը մէջէն
կ'անցնի, սակայն շատ գեղեցիկ է և Աքս-
տաֆա-չային երկայնութեամբ շինուած է,
որոյ մէջ կը ցոլանայ լուսնի մասնիկը, գե-
անգերեայ գեղեցիկ ծառերը, բարձրաբերձ
կաղամախներ և ընկուզենիլք կը խոնարհին
դէպ ի տարօրինակ և կատաղի գետը, հոն
իրենց սուղարթագեղ զագաթունքը թրջելու
համար :

Իսոյոյն կը հասնինք նեղ կրճի մը մէջ,
ուր գետը կ'ընթանայ երկու կանտոնաւոր հա-
տուածակողմեան պորփիւրէ անազին պարխա-
սներու մէջէն, որոնք տեղ տեղ՝ վերէն վար
զարդարուած են եղևնիներու ծառախիտ ան-
տառներով, որոնց անտարանը լյոյս առնն
անշուշտ հիանալի է : Դելիմանի և Քարուան-
սերայի մէջանոց զանազն խորածորին ժայռե-
րու այս վտեմ խառնակութիւնը կարելի է
բաղգասել Ղլիմի ծովեզերեայ ժայռերուն :

Այս տեղ կիրճը կ'ընդլայնի, և յանկարծ
բիւրաւոր փոքրիկ զողջուն և խուսափուկ
լոյսեր կ'աւետեն մեզ Քարուանսերայ մեր-
ձակոց դիւրը : Օթեանը գիւղին վերագոյն
կողմը կը գտնուի, ուստի խարազանի խրո-
սագոյն հարուած մը պէտք է հոն հասնել
կարենալու համար : Սակայն կառավարը կը
մտրակէ իւր ձիերը, որոնք որոտաձայն կը
խոյանան Քարուանսերայի կամիջին վրայ, և
վերջապէս փոքրալից կանց կ'առնուն օթևա-
նին զիմաց, ուր ամենայն երազութեամբ կը
փոխուին ձիերը :

Հովիտը, գետ ևս հանդուցի մը միջոց,
կրային և պորփիւրային կազմութիւններ կը
ներկայացնէ մեր աչաց, և յետոյ երկիրը
կը փոխուի և կ'ըլլայ՝ հարթ և միօրինակ :
Աքսոտաֆա հասնելու համար գետ 22 հա-
զարամետր պէտք է ընթանալ :

Գիշերը՝ օդը կը ցրտանայ և լուսինը կը
ծածկուի : Փայտոտնին խոր կծկած կը լա-
նանք քնանալ, երբ հաս և հոն գովէջներու
լծուած սայլերու ձայնը կը լսուի, որոնց կա-

X

X

նախարհները կը քնանան : Քապարտաւ, Քապարտաւ (տեղ տուէք), ի զուր կը պտայ մեր կառավարը, որ հաղիւ կընայ սանձել իր սրբնթաց ձիերը : Նոյն միջոցին ետեի կողմէն գատարկ կառախումբ մը արագաբար վրայ կը հասնի : կառավարներու սղագակները իրարու կը խտուռուին, և բոլոր այս սահմանապահից խտուռակութիւնը անկարծելի կերպով յանկարծ կը հանդարտի :

Ուրիշ անգամ մի ևս կառք մը փափաքելով մեզմէ յտակ հասնել յօթիսան, որպէս զի հոն կարծես այսօրով կերպով ձիեր գտնել, կը ջանայ վախցնել զմեզ, կործել առաջով մեզ որ ինքը բարձրատարածան պաշտօնեայ մը կը տանի, որուն ի հարկէ պէտք է սեպի տալ : Մեր կառավարը ոչ միայն սեղմոցտար, այլ նաև ձիերուն երագութիւնը կը կրկնապատկէ . և ահա սեաւ և խոր գլշերտան ասան՝ յախուռն ընթացք մ'է որ կը սկսի : Մեր կառւիին հանած փոշին անհանգիստ կ'ընէ մեր ետեէն եկող ճանապարհորդները, որոնք սիրամարգի նման ձայներ կը հանեն :

Ինչպէս պիտի կարենանք սղջ ազատիլ այս յանդուգն գործի մէջէն : Աստուած գիտէ զայն : Սակայն ուս կառապաններու մոլեռանդութեան շափ վարմանալի է նաև հանդարտութիւն . և այս ճեպընթաց և անխոհեմ ընթացքն զլսխնիս կը գտնայ ձիերուն նման :

Առաւօտեան ժամը երկուք ու կէսին կը հասնինք յԱրզաֆա, բայց շատ կանուխ, որովհետև զէպ ի Տփղիս մեկնող շողեշարժ

կառախումբը ժամը հինգին ճամբայ կ'ելնէ : կայարանին մէջ, որ կը նորոգուէր, չկար սենեակ մը ուր կարելի ըլլար քիչ մի հանդչիլ, որովհետև մի անգամով 155 հազարամեյր տեղ կտրեր էինք կառքով :

կայարանը լի է կէս քուն կէս արթուն ճանապարհորդներով որոնք զտառուքս կ'ուտեն և թէլ կը խմեն, սպասելով կառախումբի մեկնելու ժամուն : Վերջապէս ժամանակը կու գայ, Վերջնական կերպով կը բաժնուինք մեր գերազանց ընկերէն՝ Համբարձում Պէտրգեանց, որ սիրով ընկերեց մեզ մինչև հոս, որ և իրեն տունը գառնուլու համար, հարկ է որ 75 հազարամեյր ճամբայ ընէ ի Գեղիժոն հասնելու համար, և 101 հազարամեյր ևս՝ Գեղիժանէն մինչև յԵրևան :

Կ'ելնենք խորշի մը մէջ, ուր ճանապարհորդք արզևն ձեռքերնին կծկած կը քնանան կրկնայարկ սքանչելի բաղրոնակներու վրայ : կարգէ գուրս յսգնած, մենք ալ իրենց պէս կ'ընենք :

Առաւօտեան ժամը եօթին, կառախումբը կը մտնէ Տփղիսի կայարանին մէջ, որուն ընդհանուր երևոյթը սքանչելի կերպով ակնհասնող է : Մինչդեռ կատր մը արագաբար կը տանի զմեզ զէպ ի Լոնտայի սանդուղ, զարմանքով կը դիտեմ որ այսօրուան Տըփղիս քաղաքը ամենին չի նմանիր ցուրս, անձնայլին Տփղիսին, զոր տեսեր էի արբիլ ամսոյ մէջ : Օղոստոսի պայծառափայլ ճառս գայթից տակ, անոր երևայթը շատ աւելի շքեղ և գեղածիժող էր :

Շարայարեղի

